ՏԵՍԱՆՈՂԻ ԿԵՐՊԱՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՏԵՍԻԼՆԵՐՈՒՄ

ՍԵԴԱ ՄԵՍՐՈՊՅԱՆ

Տեսիլները միջնադարյան գրականության ամենատարածված տեսակներից են։ Հայ մատենագրության սկզբնավորումից ի վեր դրանք լայն տարածում են գտել զանազան ստեղծագործություններում՝ պատմադրական երկերում, սրբախոսական գրականության՝ վարքերի ու վկայաբանությունների մեջ, պարականոն հուշարձաններում և այլուր։

Տեսիլի, որպես գրական ինքնահատուկ տեսակի, կառուցվածքային պարտադիր տարրերից մեկը տեսանողի կերպարի առկայությունն է։ Ըստ որում, պետք է միմյանցից զանազանել տեսանողի և պատմողի կերպարները, որոնք մի դեպքում կարող են համընկնել (տեսանողն ինքը պատմի իրեն հայտնված տեսիլը), մեկ այլ դեպքում՝ տարբեր լինել (պատմողը ներկայացնի որևէ մեկի տեսիլը)։ Թե՛ մեկ, թե՛ մյուս դեպքերում տեսիլը, որպես միջնադարյան գրական տեսակ, պարտադրում է իրեն հատուկ լեզվական միջոցներ, խորհրդանշանների ընտրություն, կառուցվածք և այլն, որոնք անդադար կրկնվում են տեսիլից տեսիլ, ստեղծելով առհասարակ միջնադարյան գրականությանը հատուկ միօրինակություն։ Չպետք է մոռանալ, որ միջնադարի մարդն ավելի շուտ կողմնորոշվում էր դեպի նախապես ծանոթը, այսպես կոչված «ընդհանուր տեղին», որը նրա համար ճշմարտացիության չափանիշ էր։ Ինչպես նկատել են հետազոտողները[1], միջնադարյան միտքը, համապատասխանաբար նաև գրականությունը, խուսափում էին յուրօրինակությունից ու բազմազանությունից։ Սակայն միջնադարյան խրատական գրականության, այդ թվում նաև տեսիլի ժանրի կայունությունը (կառուցվածքի տեսակետից) բացատրել միայն ողջ միջնադարի գրականությանը հատուկ ավանդականությամբ[2]՝ բավարար չէ։ Այդ կայունությունը պայմանավորված էր նաև այն լսարանի (կամ՝ ընթերցողների) պահանջներով, հատկանիշներով, որոնց հասցեագրված էր տվյալ երկը, այսինքն՝ ստեղծվում էր յուրօրինակ «փոխադարձ կապ» լսարանի և գրական երկի միջև։ Խոսելով առհասարակ միջնադարյան լսարանի մասին, չպետք է մոռանալ, որ, այնուամենայնիվ, այն միատարր չէր։ Տարբեր տեսիլներ, ըստ երևույթին, նախատեսված էին տարբեր լսարանների համար։ Այսպես կոչված «քաղաքական տեսիլներն», օրինակ, հասցեագրվում էին հատկապես իշխանավորներին կամ հոգևոր բարձր դասին, մինչդեռ, ասենք, հրաշապատում տարբեր, սքանչելագործությունների նկարագրություններ պարունակող տեսիլները նախատեսված էին ժողովրդական լայն զանգվածների համար։ Այսպես, օրինակ, թեև պատմիչը որպես «Սահակի տեսիլի» լսարան ներկայացնում է ոչ միայն «բազմութիւն աւագացն Հայոց, տանուտերացն և սեպհացն», այլև «միահամուռ ժողովրդոցն բազմութիւն»-ը[3], այնուամենայնիվ, այդ տեսիլը, որ բնույթով քաղաքական է (կանխագուշակում է Արշակունյաց անկումը և Հայոց քահանայապետության վերացումը), հասցեագրված է հատկապես իշխանավոր դասին և բարձր հոգևորականությանը։ Ըստ որում, Սահակի ունկնդիրները հավատ են ընծայում նրա խոսքին, վստահում են նրա հեղինակությանը։ «Հեղինակությունը» տեսիլի հավաստիության, ճշմարտացիության չափանիշներից մեկն է։ Սակայն եթե «արտոնյալ լսարանի» համար բավարար էր տեսանողի կամ տեսիլը հաղորդողի հեղինակությունը, ապա հասարակ ժողովրդին դա չէր բավարարում, թեև հոգևոր հովիվը կամ, ասենք, իշխանավոր մեկը հասարակ ժողովրդի աչքում նույնպիսի, եթե ոչ ավելի բարձր հեղինակություն էր։ Ժողովրդի համար շատ ավելի հասկանալի և համոզիչ էին ակնառու փաստերը, քան աստվածաբանական խրթին ու վերացական դատողությունները։ Ուստի և ժողովրդական լայն զանգվածների համար նախատեսված տեսիլները (ինչպես, ասենք, «հանրային տեսիլները») ավելի հաճախ զուգակցվում էին առավել «տեսանելի», հրաշապատում տարրերով։ Իսկ հրաշագործությունը (հրաշք գործելը)

---

[1] Гегель, Эстетика, т. 4, М., 1973; А. Я. Гуревич, Проблемы средневековой народной культуры, М., 1981.

[2] А. Я. Гуревич, նշվ. աշխ., էջ 31։

[3] Ղազար Փարպեցի, Պատմութիւն Հայոց, Երևան, 1982, էջ 82։

քրիստոնեական առասպելական հերոսների՝ աստծո, Քրիստոսի կամ հրեշտակների մենաշնորհը չէր, որպես օրենք, նաև աստծո սրբերը պետք է բավարարեին հրաշագործության համընդհանուր և անհաղթահարելի պահանջը։ Սրբերի շարքն էին դասվում թե՛ վարքագրական, թե՛ վկայաբանական հերոսները։ Այսպիսով, սուրբն «ապրում էր մարդկանց մեջ, սակայն նրանում մշտապես և ակնհայտորեն դրսևորվում է բարձրագույն կամքը, որի շնորհիվ էլ նա հրաշքներ էր գործում»[5]։ Այս իսկ պատճառով տեսանողի ամենահաճախադեպ տեսակը սուրբն է՝ որպես տեսանելի և վերերկրյա աշխարհների փոխադարձ չափման ամենաակնառու վկա։

Տեսանողի կերպարն անմիջականորեն առնչվում է հավատի խնդրին։ Միջնադարյան աշխարհայացքի յուրահատկություններից մեկը հանդես է գալիս հենց այս պարագայում։ Այն ժամանակների մարդը տեսիլը, հրաշքը ոչ միայն անհնար, անիրական կամ անհավատալի չէր համարում, այլև համոզված էր, որ դրանցում դրսևորվում է բարձրագույն իրականությունը, գերագույն ուժերի գործողությունը։ Հավատը պահանջում էր «հավատալ՝ հակառակ դատողությանը»[6], իսկ «կրոնական կյանքի անհատականացումն ու միստիկան.... Օգնում էին անմիջական հարաբերություններ ստեղծելու աստծո և նրա կողմից փրկվող հոգու միջև»[7]։

Մյուս կողմից, դեռևս Ավետարանն էր զգուշացնում, որ «սուտ քրիստոսներ ու սուտ մարգարէներ պիտի ելնեն և նշաններ ու զարմանալի գործեր պիտի ցույց տան մոլորեցնելու նպատակով, եթէ հնար լինի՝ նույնիսկ ընտրեալներին»[8], և միջնադարի մարդն ամեն ինչին չէր, որ կուրորեն հավատ էր ընծայում։ Ղևոնդ Երեցն իր «Պատմության» մեջ նկարագրում է մի միայնակյացի, որը «մոլորության ոգով տարված, մարգարեանում էր սնոտի և ունայն խոսքերով» և «օրըստօրե սուտ և սրտի բաղձալի տեսիլք էր պատմում», ու թեև ասվում է, թե «բոլորը հավատալով նրան տեսանող էին կոչում», այնուամենայնիվ ակներև է, որ ոմանք էլ թերահավատորեն կամ նույնիսկ ժխտողաբար էին վերաբերվում, ինչպես հենց ինքը՝ պատմիչը[9]։

«Աստծո միանձնացած այր» Իսրայելի տեսիլի կապակցությամբ երկպառակվել էր ոչ միայն հոգևոր դասը, այլև հավաքված ողջ բազմությունը։ Գիշերվա չորրորդ ժամին հայտնված «սքանչելիս» տեսիլը Իսրայելին ազդարարում է նահատակների նշխարների և «աստվածային այլ գանձերի» տեղը և հրահանգում, թե նա ինչ պետք է անի։ Ահուդոյի մեջ ընկած Իսրայելը շտապում է Դավիթ եպիսկոպոսի մոտ և նրան պատմում իր տեսիլը, սա էլ՝ Աղվանքի հայրապետ Ոսկանեսին։ Վերջինս գոհություն է հայտնում աստծուն՝ սուրբ մասունքների տեղը հայտնի դարձնելու համար, բայց և միաժամանակ խիստ զարմանում է, թե ինչպես է Իսրայելն արժանացել այդ հայտնությանը։ Տեսիլի առիթով ժողով է հրավիրվում, որտեղ Հովել եպիսկոպոսը խիստ հանդիմանում է հայրապետին այն բանի համար, որ նա լսում է «այդպիսի դատարկաբանություն, ականջ դնում ցնորական տեսիլքներին, երբ Աստվածաշունչը սովորեցրել է չընդունել դրանք։ Քանի որ առաքյալների և ավետարանիչների քարոզելուց հետո այդպիսի երևույթներ տեղի չեն ունեցել, ապա այժմ ևս չպետք է լինի»։ Հայրապետն առարկում է, թե «ինչ-որ նոր ու չլսված բան է այս տեսիլքի պատմությունը, կարող է աստծուց լինել, և մենք հակադրվելով դրան՝ իբրև զլացողներ դատապարտվենք։ Չպետք է այդ հայտնությունը մտացածին համարել, քանի որ առաքյալներից հետո բոլոր սրբությունները... վերջին ժամանակներս մարդկանց տեսիլքով զանազան տեղեր հայտնաբերվել են» (ընդգծումը մերն է — Ս. Մ.)[10]։ «Աստվածային գանձերը» հայտնաբերելու համար հավաքված ողջ բազմությունը ևս երկպառակված էր. մի մասը հավատում էր տեսիլին, երկրորդը՝ համարում խաբեություն։

Անկախ այն բանից, թե տվյալ դեպքում խնդիրն ինչ լուծում է ստանում, վերոբերյալ դրվագն ակներև ցույց է տալիս, նախ, որ ամենևին ոչ բոլոր տեսիլներն էին անառարկելիորեն ճշմարտացի համարվում և ամեն ինչին չէր, որ միջնադարի մարդը կուրորեն հավատում էր։ Մյուս կողմից, այստեղ շատ հետաքրքրական ձևով դրսևորվում է այսպես կոչված «նույնակա-

---

4 А. Я. Гуревич, նշվ. աշխ., էջ 79։

5 Նույն տեղում, էջ 187—188։

6 Կ. Պլատոնով, Կրոնի հոգեբանությունը, Երևան, 1974, էջ 105։

7 Л. П. Карсавин, Культура средних веков, Петроград, 1918, с. 170.

8 «Ավետարան ըստ Մարկոսի», ԺԳ, 22 («Նոր կտակարան», էջմիածին, 1969, էջ 159)։

9 Ղևոնդ Երեց, Պատմություն, Երևան, 1982, էջ 114։

10 Մովսես Կաղանկատվացի, Պատմություն Աղվանից աշխարհի (այսուհետև՝ Կաղանկատվացի, Երևան, 1969, էջ 158։

նության էսթետիկան»[11], երբ որևէ փաստի հզմարտացիությունը հիմնավորվում է նրա նախատիպ փաստի առկայությամբ։ Տվյալ դեպքում հետաքրքրական է, որ միևնույն երևույթը (Խոքաչելի-տեսիլը) դնահատելիս թե՛ տեսիլի ընդդիմախոս հոգևորականը և թե՛ այն պաշտպանողը իրենց կարծիքը հիմնավորելու համար վկայակոչում են անցյալի համանման փաստերը։ Երկու դեպքում էլ՝ «ոգևոր հայրերը համոզված են, որ իրենց փաստարկները բավարար են տեսիլը դնահատելու հարցում։

Այժմ վերադառնանք տեսանողի կերպարին և տեսննենք, թե այն ինչպես է առնչվում հավատի խնդրին։ Նախ, սրպեսզի տեսանողի հաղորդած պատմությունը իրեն հայտնված «հրաշալի» տեսիլի վերաբերյալ արժանահավատ լիներ, տեսանողը պետք է որևէ կերպ զանազանվեր հասարակ մահկանացուներից՝ իր դիրքով, սրբակենցաղ վարքով, մարդկային առաքինություններով և արժանի լիներ տեսիլի միջոցով հաղորդակից լինելու գերբնական ուժերի, գերբնական աշխարհի գաղտնիքներին, յուրօրինակ միջնորդ դառնալու այդ գերբնական ուժերի և հասարակ մահկանացուների միջև։ Ուստի և, բնականաբար, տեսիլներն ավելի հաճախ հայտնվում են սրբերին կամ սրբակենցաղ մարդկանց՝ հոգևոր հայրերին կամ սուրբ անապատականներին՝ որպես աստծուն և գերբնական ուժերին առավել մոտ կանգնած և նրանց բարեհաճությունը վայելող մարդկանց։ Սակայն, չնայած թվարկված առաքինություններին, այնուամենայնիվ, բարձրագույն ուժերի հետ հաղորդակցությունը համարյա միշտ ահ ու սարսափի մեջ է գցում տեսանողին, որն, ուշքի գալով, նաև զարմանում է, թե ինչպես «աստուած արժանի արար զանարժանութիւնս իմ այսպիսի ահաւոր տեսլեանս։ Գերագույն ուժերի, բարձրյալի հետ հաղորդակցվելիս տեսանողին պատած երկյուղը կամ սարսափը շատ բնական են և չեն ծնվում նրանց նկատմամբ թերահավատությունից։ Ընդհակառակն, հասարակ մահկանացուներից իր արժանիքներով, վարքուբարքով, մարդկային նկարագրով բարձր կանգնած տեսանողն անգամ աստծո, գերբնական ուժերի առջև խեղճ ու փոքրիկ մի արարած էր[12], որն ի տես այդ ուժերի չէր կարող չերկնչել կամ չսարսափել, թեև հավատում ու սիրում էր իր աստծուն։ Միջնադարի մարդու գիտակցության մեջ աստծո գաղափարն անմիջականորեն զուգակցվում էր մահվանից հետո նրա դատաստանի գաղափարի հետ, իսկ դա չէր կարող նրան երկյուղ չպատճառել. որքան էլ բարեպաշտ լիներ նա։ Բացառիկ դեպքերում է միայն տեսիլն ընկալվում որպես բնական, օրինաչափ երևույթ և ահուդողի մեջ չի գցում տեսանողին, սակայն դա էլ անպայման պատճառաբանվում է։ Այսպես՝ Հակոբ Մծբնեցու վարքում նման երկու դեպքերի նկարագրության ենք հանդիպում։ Մծբինի հոգևորականները մեռած եպիսկոպոսի փոխարեն պետք է նոր եպիսկոպոս ընտրեին, բայց համաձայնության չեն գալիս և դիմում են Անախոքի պատրիարքի օգնությանը։ Աղոթքի ժամանակ վերջինիս պարուրում է «ափշութիւն որպէս թէ ի քուն ինչ». նրան հայտնված հրեշտակը մատնացույց է անում Հակոբին։ Երբ պատրիարքն ուշքի է գալիս, նա ոչ միայն չի սարսափում իրեն հայտնված «հրաշալի և ահաւոր» տեսիլից, այլև միանգամայն հանգիստ և բնականորեն է ընդունում այն՝ «Զի սովոր էր նա զհոգևոր տեսիլն տեսանել»։ Ճիշտ նույնպիսի հանգստություն է դրսևորում նաև Հակոբ Մծբնեցին, երբ աստծո հրեշտակը տեսիլում նրան հայտնում է կառուցվելիք եկեղեցու տեղը. «Եւ ոչ զարհուրեցաւ երանելին ընդ տեսիլ հրեշտակին, զի բազում անգամ սովոր էր տեսանել զտեսիլ աստուծոյ»[13]։ Երկու դեպքում էլ վարքագրության հերոսները կատարյալ քրիստոնյաներ են, որոնց համար սովորական է դարձել աստծո հրեշտակների հետ հաղորդակցվելը։ Մյուս կողմից, սակայն, այն հանգամանքը, երբ ընդգծվում է, թե հերոսը «ոչ զարհուրեցաւ» ի տես գերագույն ուժերի, վկայում է, որ ավելի օրինաչափը զարհուրելն է, երկնչելը։ Իսկ եթե այդպես է, ապա վարքագիրն այդ փաստով ավելի է ընդգծում իր հերոսների բարեպաշտությունն ու կատարելությունը։ Նույնիսկ իր բարեպաշտությամբ աստծո հաճույքյանն արժանացած Կոստանդիանոս կայսրը, որին իր ողջ կյանքի ընթացքում «հրեշտակ յերկնից երևեալ սպասաւորէր, և ինքն ինքեան տեսանէր զսպասաւորութիւն հրեշտակին»[14], այնինքն՝ որի համար սովորական էր դարձել իրեն սպասավո-

---

[11] А. Я. Гуревич, Устная и письменная культура средневековья («Серия литературы и языка», т. 41, № 4, М., 1982, с. 349).

[12] Н. И. Прокофьев, Образ повествователя в жанре «видений» литературы древней Руси («Ученые записки Московского государственного педагогического института», 1967, № 256, с. 37).

[13] «Վարք և վկայաբանութիւնք սրբոց», հ. Բ, Վենետիկ, 1874, էջ 86, 101։

[14] Ուխտանէս եպիսկոպոս, Պատմութիւն Հայոց, Վաղարշապատ, 1871, էջ 105։

ղող հրեշտակի ներկայությունը, դիմելով նույն Հակոբ Մծբնեցուն, ասում է. «յորմէ՛ հետէ մտեալ ես առաջի իմ, դողայ զանձն իմ ի քէն սարսափեալ. զի տեսանեմ զերկսա հրեշտակս..., որ կան քեզ ի սպասու մինն ընդ աջմէ և միւսն ընդ ահեկէ»[15]։ Մինչև անգամ Մարիամը, որ աստվածածին էր դառնալու, երբ լսում է հրեշտակի ձայնը, «զարհուրեցաւ... և երկեաւ յոյժ», շտապում է տուն և ամուր փակում դռները[16]։ Մեկ այլ տեղ, երբ Մահմեդի ուղեկիցները հարցնում են նրան, թե ինչու է խելքը թոցրել, նա բացատրում է, որ իրեն «հասավ հրեշտակի ահավոր մի ձայն և հրամայեց գնալ իր ժողովրդի մոտ և այլն»[17], այսինքն՝ հրեշտակի ձայնը լսելը միայն բավական էր «խելքը թոցնելու» համար։

Բերված օրինակներում խոսքն ամենևին էլ կրոնական էքստազի՝ այսպես կոչված «փշուքյան» մասին չէ, որը սովորաբար տեսանողին պատում է մինչև տեսիլի հայտնությունը, այլ գերագույն ուժերի հետ հաղորդակցությունից հետո նրան պարուրող սարսափի մասին է, որն, ինչպես տեսանք, միանգամայն օրինաչափ է, բնական ու հասկանալի։

Տեսանողի հաջորդ, առավել հաճախ հանդիպող տեսակը «բազմութիւնն» է, «բազումքը» կամ «համենքեանը», և սա նույնպես առնչվում է հավատի խնդրին։ Այսպես, եթե մեկ հոգու հաղորդածը իրեն հայտնված տեսիլի վերաբերյալ կարող էր թերահավատորեն կամ կասկածանքով ընդունվել, ապա տեսիլը, որին ականատես են լինում բազում մարդիկ՝ «զորս արժանիս արար տէրն», այլևս կասկած առաջացնել չէր կարող։ Այս տիպի տեսիլները կարելի է բաժանել երկու խմբի. առաջինը այն տեսիլներն են, որոնք հանդես են գալիս «աստվածային նշանների» ձևով և մեծապես կապված են հրաշքների, սքանչելագործությունների հետ։ Սակայն այս խմբի տեսիլները, որոնցում իբրև այսպես կոչված «գործող անձ» հիմնականում հանդես են գալիս քրիստոնեական որոշ խորհրդանշաններ, ինչպես ասենք՝ աղավնին, լույսը, հրեղեն սյունը, կամարակապ խորանաձև հուրը, անուշահոտությունը («հոտ անուշութեան») և այլն կամ որոշ «աստվածային նշաններ», ինչպես՝ որոտը, կայծակը, «շարժմունք երկրի» կամ «ձայն յերկնից» և այլն, թերևս միայն վերապահորեն կարելի է տեսիլ համարել (թեև հետագոտվող աղբյուրներում դրանք ավելի հաճախ հենց այդպես էլ կոչվում են), որովհետև գրանցում տեսիլի և հրաշքի սահմանագիծը մի տեսակ պարզորոշ չէ։ դժվար է դրանք հստակորեն սահմանազատել միմյանցից։ Դիմենք մի քանի ընդհանուր օրինակների, որոնք առավել հաճախադեպ են, հատկապես՝ վկայաբանական հուշարձաններում։ Վկան (կամ վկաները) բանտարկված է և աղոթում է. հանկարծակի բանտը լցվում է պայծառ լույսով, անուշահոտությամբ, հրեշտակների երգեցողության ձայն է լսվում. այս բոլորին ականատես են լինում բանտապահները կամ այլ մարդիկ։ Կամ՝ վկային տանում են խարույկի վրա այրելու և երբ նրան կրակն են գցում, «արժանավորները տեսնում են» («տեսին, որոց արժան էր տեսանելն»), թե ինչպես հուրը խորանաձև կամար է կազմում վկայաբանական հերոսի գլխին՝ առանց նրան վնասելու, լույս է ճառագում, խնկի բույր է տարածվում և այլն։ Կամ՝ վկայի գերեզմանի կամ նշխարների տեղում լույս է ճառագում, որ տեսնում են թե՛ հավատացյալները, թե՛ անհավատները։ Մեկ այլ դեպքում՝ երբ վկային տանջանքների են մատնում, սաստիկ որոտ ու թնդյուն է բարձրանում, կայծակ է ճայթում, ապա լսվում է «ձայն յերկնից», և այս բոլորն ահ ու սարսափի մեջ՝է գցում հավաքված ամբոխին և այլն[18]։

Տեսիլների երկրորդ խումբը իսկական «հանրային» (կոլեկտիվ) տեսիլներն են, որոնց ականատես են լինում շատերը։ Ըստ որում, եթե առհասարակ տեսիլներն օժտված էին ներգործուն մեծ ուժով, ապա նշված թե՛ առաջին, թե՛ երկրորդ խմբի տեսիլներից հետո է, որ անհավատների զանգվածային դարձ է տեղի ունենում դեպի քրիստոնեություն, իսկ քրիստոնյաներն առավել ամրապնդվում են հավատի մեջ։ Եթե, օրինակ, անհավատ թշնամու պարտված զորագունդը վկայակոչում է այդպիսի մի տեսիլ, որը նրանց հայտնվել է կռվի պահին ու խուճապի մատնել, ապա որքան էլ մեծաքանակ լինի պարտված զորագունդը և որքան էլ փոքրաթիվ հակառակորդից հաղթված լինի, նրան ներվում է այդ պարտությունը։ Այսպես, արաբները, որպեսզի զորապետի առջև արդարացնեն իրենց պարտությունը (քանի որ տասնհինգ հազար մարդ պարտվել էր ինն հարյուրից), ամեշտեղ են քաշում տեսիլը, որ կռվի պահին հայտնվել էր իրենց («հանկարծակի

---

15 «Սոփերք հայկականք» (այսուհետև՝ «Սոփերք»), հ. ԻԲ, Վենետիկ, 1861, էջ 9։

16 «Անկանոն գիրք Նոր կտակարանաց», Վենետիկ, 1898, էջ 14։

17 Ռ ո մ մ ա Ա ր ծ ր ո ւ ն ի և Ա ն ա ն ո ւ ն, Պատմություն Արծրունյաց տան (այսուհետև՝ Ռ ո մ մ ա Ա ր ծ ր ո ւ ն ի), Երևան, 1978, էջ 118։

18 Տե՛ս «Վարք և վկայաբանութիւնք սրբոց», հ. Ա, Բ., Վենետիկ, 1874, էջ 19, 26, 205, 411, 470, 549, 605, 40, 158, 238 և այլն։

լույսի նմանությամբ մի մարդ մտավ ռազմի ճակատի մեջ...» և այլն)[19]։ Միայն այդ տեսիլը վկայակոչելով են նրանք կարողանում «մի փոքր ցածրացնել զայրույթի լեռնացած ալիքները»։ Իսկ երբ պարսիկների դեմ պատերազմելիս կռիվը սաստկանում է, և շուրջբոլորը բռնած խավարի ու փոշու պատճառով թշնամին ու յուրայինը միմյանցից զատել չի լինում, ինչպես հավաստիացնում է Մուշեղ Մամիկոնյանը, քահանայապետ Ներսեսը «երթայր առաջի մեր և ձեռամբ իւրով ցուցանէր զթշնամիս մերոյ. վարքագիրն ավելացնում է՝ «զնոյն տեսիլ և զամենայն զօրքն պատմէին»[20]։

Այլ բան է, երբ միևնույն տեսիլը հայտնվում է երկու (կամ ավելի) տարբեր անձանց, որոնք գտնվում են իրարից հեռու տարբեր վայրերում։ Տեսիլին հավաստիություն հաղորդելու այս հնարանքը մի դեպքում ուղղված է լսարանին (կամ՝ ընթերցողներին), մյուս դեպքում՝ պատումի հերոսին՝ տեսանողին։ Պարզաբանենք. մի դեպքում տեսիլը, որ հայտնվում էր տարբեր վայրերում գտնվող մարդկանց, ընթերցողներին կամ ունկնդիրներին համոզում էր այդ տեսիլի աստվածային ծագումը, գերբնական լինելը։ Այսպես՝ տարբեր վայրերում գտնվող երկու ճգնավորներ (իսկ վարքագիրն ավելացնում է՝ «և այլ բազում հարք, որք էին յայրսն»)[21] Ներսես կաթողիկոսի մահվան պահին բաց աչքերով, ցերեկ-ժամանակ տեսնում են սուրբ Ներսեսին, որ կարծես հափշտակվում է ամպերի մեջ[22]։

Մյուս դեպքում տեսիլում հայտնված հրեշտակը կամ սուրբը տեսանողին որևէ հրահանգ է տալիս և, որպեսզի վերջինս չզլանա կատարել այդ հանձնարարությունը կամ չկասկածի, հրեշտակը կամ սուրբը հավաստիացնում են տեսանողին, թե մեկ ուրիշին ևս ցույց կտան նույն տեսիլը։ Այդպես է, օրինակ, Գրիգոր Լուսավորչի քահանայապետ դառնալու վերաբերյալ տեսիլը, որ հայտնվում է նախ Տրդատին, ապա նաև՝ Գրիգորին, որպեսզի վերջինս «չլինի թե համառոտ», այլ համոզվի, որ աստծուց է հրամայված ընդունել քահանայապետությունը[23]։ Մեկ այլ տեղ տեսիլում Հակոբ քահանային հայտնված սրբերը պատվիրում են գնալ Յրի քաղաքի իշխան Խոսկորիկի մոտ և նրա հետ միասին հանել իրենց նշխարները, միաժամանակ հավաստիացնում են, որ Խոսկորիկին էլ ցույց կտան նույն տեսիլը[24] և այլն։

Տեսիլին հավաստիություն հաղորդելու հնարանքներից մեկն էլ ականատեսին վկայակոչելն է կամ որպես ականատես ներկայանալը, այսինքն՝ երբ պատումը տարվում է առաջին դեմքով։ Այսպես, Հովհաննես Դրասխանակերտցին, վկայակոչելով «ոմանց ի հաւատացելոց և անհաւատից ևս», պատմում է Սմբատ արքայի սպանությունից հետո նրանից արձակվող ճաճանչափայլ լույսի մասին և անմիջապես ավելացնում. «և որք ասէին զայս՝ ստուգութեամբ իմն հաւաստի զբանն առնէին», իսկ եթե սա էլ բավարար չէ, ապա «մեք զայսոսիկ ի տեսողս անդր թողուցեալ, և դորս աչօք իսկ տեսեալ է մեր՝ ոչ դանդաղեսցուք պատմել»[25] և հաղորդում է, որ արքայի արյան թափված տեղում հողը ձեռք էր բերել բուժիչ հատկություններ. շատերը բժշկվում էին, իսկ հեթանոսներից շատերն էլ՝ մկրտվում։ Թադեոս առաքյալի և Սանդուխտ կույսի նշխարները հայտնաբերելիս երկնքից լույս է իջնում, օրհնության ձայն է լսվում, և սրբերի նշխարները «միմյանց մոտ են թռչում ու ողջագուրվում». «և մեր երկիւղիս մատուցեալ՝ զատուցանէաք ի միմեանցս»,— հավաստիացնում է վարքագիրը[26]։ Մեկ այլ տեղ, երբ հայերն ապստամբում են արաբների դեմ և անվախ կռվի բռնվում նրանց հետ, «ինչպես հենց թշնամուց իմացանք,— գրում է պատմագիրը,— հայերն իրենց հետ մարտակից ունեին հրեշտակների բազմությունը, որոնք մարդկային կերպարանքով երևացել էին թշնամիներին»[27]։

Տեսանողի հաջորդ տարատեսակը անհավատ մարդն է, մեղսագործը կամ թերահավատ սեկը։ Այս տիպը, որ նույնպես բավական հաճախ է հանդիպում, հիմնականում հանդես է դալիս այնպիսի տեսիլներում, որոնք կապված են անհավատին դարձի բերելու, քրիստոնեական վարդա-

---

19 Թովմա Արծրունի, էջ 164։

20 «Սոփերքդ», հ. Զ, Վենետիկ, 1853, էջ 30—31։

21 Նույն տեղում, էջ 113։

22 Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն (այսուհետև՝ Բուզանդ), Երևան, 1947, էջ 260։

23 Ագաթանգեղոս, Հայոց պատմություն, Երևան, 1983, էջ 495։

24 Կաղանկատվացի, էջ 42։

25 Հովհաննես Դրասխանակերտցի, Պատմութիւն Հայոց, Նյու Յորք, 1980, էջ 240։

26 «Սոփերքդ», հ. Ը, Վենետիկ, 1853, էջ 94։

27 Ղևոնդ Երեց, նշվ. աշխ., էջ 120։

պետության դրությունների ճշմարտացիության մեջ համոզելու կամ խոտոր վարքագիծի համար նախազգուշացնելու պատմությունների հետ։ Այդպիսին են, նախ, ինչպես վերը նշեցինք, կուլեկտիվ տեսիլները, որոնց ականատես էին լինում թե հավատացյալները, թե անհավատները և որոնցից հետո վերջիններիս զանգվածային դարձ էր տեղի ունենում դեպի քրիստոնեություն։ Երբեմն էլ անհավատ կամ թերահավատ տեսանողը կարող էր միայնակ արժանանալ «հրաշալի» տեսիլի, որը նրան դարձի էր բերում կամ ցրում թերահավատությունը։ Այսպես, Ատոմյանց նահատակության պահին «շնորհալուց պարսիկ մի ի նոյն գնդէ արժանի եղև նոյն տեսլեան (խոսքը Ատոմյանց տեսիլի մասին է, որը կանխագուշակում էր նրանց նահատակությունը— Ս. Մ.) և զաղաղակ բարձեալ, թէ՝ «ես ևս քրիստոնեա եմ», որ առժամայն կատարեցաւ մկրտեալ լիւր արիւնն»[28]։

Ղևոնդյանների նահատակության պատմության մեջ տեսանողը Մոգպետն է, որն, արժանանալով «հրաշալի տեսլեան», քրիստոնյաների «մոլորյալ հոգիները» «ճշմարիտ հավատի» բերելու փոխարեն ինքն է մկրտվում[29]։ Ռուզանդը պատմում է Վազես կայսեր կողմից կանչված Սոփեստեսի մասին, որն իբր պետք է «մաքառեր ճշմարտության դեմ», սակայն իրեն հայտնված տեսիլի պատճառով հրաժարվում է ճանապարհը շարունակել[30]։ Թեոդորոս Ռշտունու որդին՝ Վարդ Պատրիկը, «հրաշալի» տեսիլից զարհուրած արթնանում է, շտապում եպիսկոպոսի մոտ և, խոստովանելով իր գործած չարիքները՝ թողություն է խնդրում իր մեղքով հեղված արյան համար[31]։

Տեսիլի միջոցով թերահավատ մարդն ամրապնդվում է հավատում. դրա բնորոշ օրինակը Ռուզանդի «Պատմության» մեջ հանդիպող «թերահավատ եղբոր տեսիլն»[32], որի միջոցով քրիստոնեական հաղորդության խորհրդին հավատ չընծայող կրոնավորն ականատես է լինում «մեծամեծ սքանչելիքների». նա, որ չէր հավատում, թե գինին բաշխվելիս իսկապես վեր է ածվում Քրիստոսի արյան, պատարագի ժամանակ բաց աչքերով տեսնում է, թե ինչպես Քրիստոսը իշավ սեղանին, բացեց գեղարդով խոցելուց առաջացած վերքը, որտեղից արյունը սկսեց կաթկթալ բաժակի մեջ։ Ի դեպ, այս տեսիլը համարյա նույնությամբ հանդիպում է նաև Աթանաս Աղեքսանդրացու վարքում, միայն թե այստեղ այդ տեսիլին ականատես է լինում ոչ միայն ինքը՝ Աթանասը, այլև «ամենեքին, որ բեմականք էին՝ տեսին»[33]։

Տեսիլը կարող էր հայտնվել մեղսագործ-անհավատին ոչ թե նրան «ճշմարիտ» հավատի բերելու նպատակով, այլ որպես նախազգուշացում նրա մոտալուտ կործանման, ինչպես, ասենք, հանդիպում ենք Ներսես Պարթևի վարքում. հունաց Վազես կայսրը «տեսնում է», որ ինքը սպանվում է Ներսեսի սրով, և հենց նույն օրը «սատակեցաւ իբրև զշուն. և ոմանք ասեն, եթէ աներևոյթ սրով»[34]։

Խոսելով հին ռուսական գրականության տեսիլի ժանրում պատմողի (կամ տեսանողի) ավանդական կերպարների մասին, դրանց հետազոտող Ն. Պրոկոֆևը նշում է, որ մինչև XVII դարը՝ սոցիալական սուր հակասություններ և ազգային անկախության համար պայքարի ժամանակաշրջանը, ռուսական տեսիլներում գերիշխում էին բացառապես հոգևոր աստիճան ունեցող «տեսանողները» (повествователь), իսկ եթե աշխարհիկ որևէ մեկն էր արժանանում տեսիլի, ապա նա անշրջման ներկայացվում էր բարեպաշտության և սրբության այնպիսի հատկանիշներով, որոնք ավելի հատուկ էին հենց հոգևոր աստիճան ունեցող մարդկանց, քանի որ «միայն աշխարհիկ գործերով զբաղվող մարդը չէր կարող արժանանալ տեսիլի»[35]։ XVII դարասկզբից մինչև, երբ «թուլացել էր եկեղեցական վերահսկողությունը, իսկ գրականությունից մեծ ակտիվություն էր պահանջվում գաղափարական պայքարի ոլորտում, առանձին ուժով տեսիլի ժանր են թափանցում «ոչ ավանդական» տեսանողները (повествователь)»[36]։ Այս իմաստով հայկական տեսիլներն, ըստ երևույթին, զուրկ են նման խիստ կանոնիկությունից։ Ինչպես տեսանք, հայ մատենագրության սկզբնավորումից ի վեր՝ V դարից եկող տեսիլներում արդեն հանդես են գալիս

---

28 «Սոփերք», հ. ԺԹ, Վենետիկ, 1854, էջ 79։

29 Ղ ե ղ ի շ ե, Վարդանանց պատմությունը, Երևան, 1946, էջ 130։

30 Ռ ո ւ զ ա ն դ, էջ 163—164։

31 Շ ա պ ո ւհ Բ ա գ ր ա տ ո ւ ն ի, Պատմութիւն, էջմիածին, 1921, էջ 32։

32 Ռ ո ւ զ ա ն դ, էջ 265։

33 «Հիակատար վարք և վկայաբանութիւնք սրբոց», հ. Ա, Վենետիկ, 1810, էջ 224։

34 «Սոփերք», հ. Զ, էջ 61։

35 Н. И. Прокофьев, նշվ. աշխ., էջ 42։

36 Նույն տեղում, էջ 43—44։

տեսանողի բոլոր տեսակները՝ և՛ սուրբը, և՛ նշանավոր, բարեպաշտ տեսանողը, և՛ եկեղեցական բարձր պաշտոնյան, և՛ սրբակենցաղ անապատականները կամ եկեղեցու շարքային սպասավորները, և՛ մեղսագործն ու անհավատը, ինչպես նաև հանրությունը՝ բազում մարդիկ, որոնք միասին են ականատես լինում տեսիլի։

ОБРАЗ ВИЗИОНЕРА В АРМЯНСКИХ ВИДЕНИЯХ

СЕДА МЕСРОПЯН

Резюме

Видения—один из самых своеобразных и распространенных жанров средневековой армянской литературы. Один из основных компонентов композиции видений—образ визионера, все разновидности которого непосредственно носят влияние средневекового мировоззрения.

Начиная с периода возникновения армянской письменности в видениях наличествуют все разновидности образа визионера—и знаменитый благочестивый визионер, и пустынник, и простой священнослужитель, и грешник, и вероотступник, а также группа визионеров (в коллективных видениях).